ArmLur.am

I SSN 1829-2763

ՕՐԱԹԵՐԹ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

# Ժողովուրդ

18 մայիսի հինգշաբթի 2023
տպագրության ԺԲ տարի

70
(2736)

ք. Երեւան, Աբովյան 22ա/3 (0010) + 374 10 546423 info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

100 դրամ

## ՆՈՒՅՆ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋ՝ ՏԱՐԲԵՐ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ



«Նեմեսիս» գործողության մասնակիցների հուշարձանի տեղադրման շուրջ բորբոքված կրքերը չեն դադարում: Ինչպես հայտնի է, ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանը «Ազատություն» ռադիոկայանի հետ հարցազրույցի ժամանակ հայտարարել էր, թե այնքան էլ ճիշտ չի համարում այդպիսի հուշարձանի տեղադրումը, եւ որ այդ որոշման մասին տեղյակ էլ չի եղել:

Իսկ, ահա, ԱԺ ՔՊ խմբակցության պատգամավոր Գեւորգ Պապոյանն էլ հայտարարել է, թե որոշում կայացնողներն այլեւս իրենց քաղաքական թիմի անդամ չեն:

«Իրականում այն մարդիկ, ովքեր այդ որոշումները կայացրել կամ իրականացրել են կամ համաձայնությունները տվել են եւ՛ ԱԳՆ-ում, եւ՛ Երեւանի քաղաքապետարանում, իմ տեղեկություններով, նրանք այլեւս մեր քաղաքական թիմի անդամ չեն: Միգուցե նրանցից շատերը երբեք չեն էլ եղել մեր քաղաքական թիմի անդամ»,- Հանրային հեռուստաընկերության «Հարցազրույց Պետրոս Ղազարյանի հետ» հաղորդմանն ասել է Պապոյանը:

Նկատեցի՞ք՝նույն հարցի շուրջ իշխանության երկու ներկայացուցիչներ տարբեր բաներ են խոսում:

Հիշեցնենք, որ Երեւանի նախկին քաղաքապետ Հրաչյա Սարգսյանը գործող իշխանության անդամ է: 2023 թ. ապրիլի 4-ին նա նշանակվել է վարչապետի խորհրդական, եւ նրա օրոք են ձեռք բերվել բոլոր պայմանավորվածությունները:

Այնպես որ, մանիպուլյացիան չի անցնի:

Ավելին՝ Հայկ Մարությանին ՔՊ-ն գահընկեց արեց, քանի որ ինքնագլուխ որոշումներ էր կայացնում: Նրա գնալուց հետո ամեն մանրուք զեկուցվում է Նիկոլ Փաշինյանին: Որքան էլ Հրաչյա Սարգսյանը փորձի հակառակն ապացուցել, հավատարժան չեն նրա խոսքերը:



Արցախում ներքաղաքական կյանքը Սամվել Բաբայանի հանրահավաքից հետո փոթորկվել է: Արցախում վստահ են, որ Սամվել Բաբայանի շուրջ ստեղծված այս բեմադրությունն ավելի շատ Փաշինյանի նախաձեռնությունն է, որը Բաբայանն իրականացնում է ՔՊ-ական պատգամավորներ Անդրանիկ Քոչարյանի եւ Գագիկ Մելքոնյանի միջնորդությամբ: Այլ կերպ ասած, Անդրանիկ Քոչարյանն ու Գագիկ Մելքոնյանը Բաբայանի երեւանյան կուրատորներն են, եւ հենց նրանց դրդմամբ է Բաբայանը խժդժություններ անում Արցախում: Նկատենք, որ հանրահավաքը Արցախում կայացավ բրյուսելյան եռակողմ հանդիպումից հետո, որտեղ Փաշինյանը ճանաչեց խորհրդային Ադրբեջանի տարածքային ամբողջականությունը՝ Արցախը թողնելով Ադրբեջանի կազմում, սակայն Սամվել Բաբայանն այդ մասին ոչինչ չասաց: Նա միայն հայտնեց, թե դա Հայաստանի իրավունքն է, մենք պիտի մեր անելիքներն իմանանք, սակայն իրականում հանրահավաքով գոլորշի բաց թողեց, որ դժգոհությունը պարպվի եւ շեղվի Փաշինյանի վրայից: Հիմա Արցախում բոլորը շունչները պահած սպասում են նախագահ Արայիկ Հարությունյանի որոշմանը՝կնշանակի արդյոք Բաբայանին պետնախարարի պաշտոնում, թե ոչ: Արցախի մեր աղբյուրները չեն բացառում, որ Փաշինյանի ճնշման ներքո Հարությունյանը կգնա այդ քայլին, որքան էլ որ իր սրտով չլինի, բայց եւ անհավանական են համարում Բաբայանին այս փուլում այդ բարձր պաշտոնը վստահելը:



ՀՀ առողջապահության նախարար Անահիտ Ավանեսյանը գործուղումներ մեկնելու հարցում բավականին ակտիվ է: Նա այս տարի՝մինչեւ մայիսի 15-ը, չորս գործուղման է մեկնել: Նախարարի առաջին գործուղումը եղել է հունվարի 19-21-ը, երբ Ավանեսյանն Իրան էր մեկնել: Այնտեղ նա մասնակցել է «Ազդեցիկ կանանց առաջին միջազգային համագումար»-ին: Գործուղումից հետո ներկայացված հաշվետվությունից ArmLur.am-ը տեղեկանում է, որ այնտեղ Ավանեսյանը հանդիպումներ է ունեցել, նաեւ աշխատանքային խումբ ստեղծելու որոշում կայացրել: Մարտի 17-19-ը նա մեկնել է Կատար, այնտեղ մասնակցել համաժողովի, եւ որոշում է կայացվել շարունակել համագործակցությունը: Ավանեսյանը մարտին երեք անգամ է գործուղման մեկնել եւ Կատարից վերադառնալուց երեք օր անց մեկնել է Սանկտ Պետերբուրգ, այնտեղ կրկին համաժողովի մասնակցել: Հաշվետվությունից տեղեկանում ենք, որ որեւէ փաստաթուղթ, հուշագիր չի ստորագրվել, միայն եղել են հանդիպումներ եւ ելույթներ: Մարտին եւս մեկ անգամ է գործուղում եղել, այս անգամ էլ՝ մարտի 29-ից 31-ը՝ Շվեյցարիա: Այսինքն՝ մարտ ամիսը նրա համար բավականին ակտիվ է եղել: Այստեղ եւս փաստաթուղթ չի ստորագրվել, սակայն աշխատանքային խմբի մեկնարկ է տրվել հետագա աշխատանքների համար: Առկա տվյալների համաձայն՝Անահիտ Ավանեսյանի վերջին գործուղումը մինչ այս պահը եղել է Հնդկաստան ապրիլի 25-ից 29-ը, որի ժամանակ նախարարը մասնակցել է գագաթնաժողովի: Իսկ ու՞մ հաշվին են եղել գործուղումները՝ կիարցնեք դուք. մեծ մասը եղել է պետական բյուջեի հաշվին, որոշ մասը՝ հրավիրող կողմի, սակայն ամենաթափանցիկ կառավարությունը թաքցնում է անդամների գործուղման ծախսերը:



«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկությունների համաձայն՝Հայաստան ներմուծված 1տոննա կոկաինի դեպքով ԱԱԾ-ն դուրս է եկել մեծ շղթայի հետքի վրա, որում ներգրավված են ինչպես արտերկրում, այնպես էլ Հայաստանում ապրող քաղաքացիներ: Իրավապահ համակարգում կասկածներ կան, որ Հայաստան ներմուծելու գործընթացը հովանավորվել է խոշոր «տանիքների» կամ բարձրաստիճան պաշտոնյաների կողմից, ուստի կալանավորումների շարք է սպասվում այդ գործի շրջանակներում: Իսկ թե ովքեր են ներգրավված գործում, կներկայացնենք մանրամասներ առաջիկայում: Հիշեցնենք՝երեկ ԱԱԾ-ն հայտնեց, որ 2023 թվականի մայիսի 13-ին նախաձեռնված եւ իրականացվող թիվ 58221423 քրեական վարույթի նախաքննության ընթացքում կատարված վարութային գործողություններով պարզվել է, որ Հայաստանի Հանրապետությունում գործող եւ մրգերի ներմուծմամբ զբաղվող ընկերության կողմից Էկվադորում գտնվող ընկերությունից պատվիրված ապրանքատեսակի հետ տարանցիկ երկրների՝ Պանամայի Հանրապետության, Իտալիայի Հանրապետության եւ Վրաստանի տարածքով Հայաստանի Հանրապետություն է ներմուծվել Կոկաին տեսակի՝շուրջ մեկ տոննա քաշով թմրամիջոց /շուրջ 250 միլիոն եվրո արժողության/, որը հայտնաբերվել եւ գտնվում է ՀՀ ազգային անվտանգության ծառայությունում: Քրեական վարույթով նշանակվել է դատանյութագիտական փորձաքննություն, կատարվել են հարցաքննություններ, տեղեկատվության պահանջ է ուղարկվել իրավասու մարմիններ, հետաքննության մարմնին տրվել է օպերատիվ-հետախուզական միջոցառումներ ձեռնարկելու վերաբերյալ հանձնարարություն: Նախաքննությունը շարունակվում է:

ԳՈՐԾ ՉՈՒՆԵՔ

# ՀԱՂԹԱՆԱԿՆԵՐԸ ՃԻՇՏ ՉՕԳՏԱԳՈՐԾՎԵՑԻՆ

**Բրյուսելում այս կիրակի տեղի ունեցած Փաշինյան-Միշել-Ալիեւ եռակողմ հանդիպումից հետո Եվրոպական խորհրդի նախագահ Շառլ Միշելը հայտարարել էր, որ Հայաստանը եւ Ադրբեջանը պատրաստակամություն են հայտնել փոխադարձ ճանաչել տարածքային ամբողջականությունը՝ 1991թ. Ալմա-Աթայի հռչակագրի հիման վրա, եւ հարգել Հայաստանի 29.8 հազար ք/կմ եւ Ադրբեջանի 86.6 հազար ք/կմ տարածքները:**



«Ժողովուրդ» օրաթերթը բրյուսելյան հանդիպումից հետո զրուցել է ԵԿՄ համահիմնադիր, «Կոռնիձոր» ջոկատի հրամանատար Արա Խուդավերդյանի հետ:

**-Պարոն Խուդավերդյան, Դուք ի՞նչ կասեք, ի՞նչ է ենթադրում Ադրբեջանի տարածքային ամբողջականության ճանաչումը՝ 86,000 ք/կմ տարածքի սահմաններում:**

-Հայաստանն Արցախը ճանաչել է Ադրբեջանի կազմում, նախկինները ճանաչել են Արցախը որպես Ադրբեջանի տարածքային անբաժանելի մաս, հիմա Արցախի ժողովրդի անձնագրերում գրվում է՝ ծնված Ադրբեջանի Հանրապետությունում: Երկրորդ՝ Ղարաբաղի ժողովուրդն ինքն է որոշելու իր ճակատագիրը՝ լինելու է Ադրբեջանի կազմում, թե Հայաստանի: Ես նման բան չեմ լսել, որ Ղարաբաղը հայտարարի՝ միանում է Հայաստանին, բացի 88թ.-ի ԼՂՀ պարտիայի որոշումից: Այնպես որ, Հայաստանը շատ հեռու է նման որոշում կայացնելուց, Ղարաբաղն ինքն է իր ճակատագրի տերը: Ոնց որ միշտ, հայտարարել են՝ դուք մեզ փող ու զենք ուղարկեք, մնացածի հետ գործ չունեք:

**-Պարոն Խուդավերդյան, կարո՞ղ ենք ենթադրել, որ Հայաստանի իշխանությունը ճանաչում է Արցախն Ադրբեջանի կազմում:**

-Մինչեւ Շառլ Միշելի հայտարարության անդրադառնալը վերադառնանք անցյալ. Արցախը որպես Ադրբեջանի տարածք չի՞ ճանաչվել Հայաստանի այդ ժամանակվա իշխանությունների կողմից: Շառլ Միշելը լրացուցիչ վերահաստատեց այդ ամենը: Տարբեր բանակցային պրոցեսներում, երբ Արցախի տարածքային ամբողջականության հարցն է բարձրացվել, Հայաստանի դիրքորոշումը եղել է այն, ինչն այս պարագայում հայտարարեց Շառլ Միշելը:

**-Ասում եք՝ նախկիններն են ճանաչել Արցախն Ադրբեջանի կազմում. ու՞մ նկատի ունեք, կոնկրետ ովքե՞ր:**

-Ովքեր որ ի պաշտոնե մասնակից են եղել այդ ամենին եւ իրավունք են ունեցել դիրքորոշում հայտնելու: Նկատի ունեմ բոլորին, ովքեր բանակցելու իրավունք են ունեցել. անվանական նշում չեմ անելու, թող ղեկավարներից ամեն մեկն ինքն ասի, թե ինչ դիրքորոշման տակ են ստորագրել եւ մեզ՝ որպես պետություն, ինչ փաստերի առաջ են կանգնեցրել:

**-Եթե տրված էր Արցախը, ինչի՞ համար էինք պայքարում, ինչու՞ էին մեր զինվորները սահման պահում:**

-Ցավոք, քաղաքական եւ դիվանագիտական սփերան չքայլեց ռազմական ուժերին համատեղ, չփորձեց ամրագրել ռազմական հաղթանակները: Արցախի ճակատագիրը այս պահին Արցախի իշխանությունների եւ Արցախի ժողովրդի ձեռքերում է: Հայաստանից ինչ հասնում էր, արել ենք՝ հանուն Արցախի: Ես միշտ ասել եմ՝ մեր ձեռք բերած հաղթանակները ճիշտ չօգտագործվեցին, օգտագործվեցին՝ ընդդեմ Հայաստանի:

*Զրուցեց ՔՐԻՍՏԻՆԵ ՄՈՒՇԵՂՅԱՆԸ*

ԼՈՒՐՋ ԽՆԴԻՐ

# ԹՈՎՄԱՍՅԱՆԸ ԿԱՐԵՎՈՐ ՀԱՆԴԻՊՈՒՄ Է ՈՒՆԵՑԵԼ

**ԱԺ մարդու իրավունքների պաշտպանության եւ հանրային հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ, անկուսակցական Թագուհի Թովմասյանը սոցցանցի իր էջում գրում է. «Խորհրդարանում հյուրընկալեցի Հայաստանում Նիդերլանդների Թագավորության արտակարգ եւ լիազոր դեսպան Ն.Գ. Նիկո Սխերմերսին:**



Քննարկեցինք Բրյուսելում կայացած Փաշինյան-Ալիեւ-Միշել հանդիպման արդյունքներն ու Եվրոպայի խորհրդի նախագահ Շ. Միշելի հայտարարությունը: Նշեցի, որ Նիկոլ Փաշինյանի կողմից Արցախն Ադրբեջանի կազմում ճանաչելն ունի լեգիտիմության լուրջ խնդիր, քանի որ ՀՀ Գերագույն խորհրդի՝ 1992թ. հուլիսի 8-ի որոշմամբ նշվում է. «Հայաստանի Հանրապետության համար անընդունելի համարել միջազգային կամ ներպետական ցանկացած փաստաթուղթ, որտեղ Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը նշված կլինի Ադրբեջանի կազմում»:

Պարոն դեսպանին ներկայացրի իմ նախաձեռնությամբ իրականացվող ստորագրահավաքի նպատակը եւ արդյունքները, այն է՝ներկայացնել ժողովրդի կամքը, որ Արցախը երբեք չի կարող լինել Ադրբեջանի կազմում: Նշեցի, որ ընդհանուր հավաքվել է 300 հազարից ավելի ստորագրություն, որը վկայությունն է այն պարզ ճշմարտության, որ ժողովուրդը համաձայն չէ ներկայիս իշխանության վարած քաղաքականության հետ:

Խոսելով Հայաստանում ժողովրդավարության լրջագույն խնդիրների մասին՝ հիշատակեցի ԱԺ ՄԻՊՀՀ հանձնաժողովի խայտառակ նիստում տեղի ունեցած անօրինությունները, երբ իշխող «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության քարտուղար Արթուր Հովհաննիսյանը սպառնաց կտրել ընդդիմադիր խմբակցությունների կողմից առաջադրված ՄԻՊ թեկնածուի ականջներն ու լեզուն եւ մնաց անպատիժ: Ավելին՝ դեռ մտածում են իմ պաշտոնանկության հարցը բարձրացնել, որ չեմ արգելել Էդգար Ղազարյանին ելույթ ունենալ իր հասանելիք ժամանակահատվածում:

Ներկայացրի, որ քաղաքական ակցիա իրականացնելիս ինձ եւ իմ գործընկեր պատգամավորներին անվտանգության աշխատակիցները՝ ԱԺ նախագահի հրահանգով, բռնությամբ դուրս հանեցին Ազգային ժողովի դահլիճից ընդմիջման ժամանակ եւ թույլ չտվեցին այլեւս մտնել ԱԺ դահլիճ: Այս անօրինության համար ոչ ոք պատասխանատվություն չի կրել:

Նիդերլանդների Թագավորության արտակարգ եւ լիազոր դեսպանի հետ մեր ունեցած զրույցի ընթացքում հայտնեցինք մեր պատրաստակամությունը՝ընդլայնելու համագործակցության շրջանակները»:

## ԱՎԱԳԱՆՈՒ ՆԻՍՏ ԿԳՈՒՄԱՐՎԻ

Մայիսի 23-ին Երեւանի ավագանին նիստ է գումարելու: ArmLur.am-ը տեղեկացավ, որ օրակարգում ընդգրկված է 14 հարց, որից 6-ը չզեկուցվող են լինելու: Որոշումներից մեկով Երեւան քաղաքի ավագանու կողմից անշարժ գույքի հարկի եւ փոխադրամիջոցի գույքահարկի արտոնություններ սահմանելու եւ համայնքի բյուջեից վճարում կատարելու մասին հարցն է քննարկվելու: Նախագծերից մեկով առաջարկվում է «ՁԵՎԱՎՈՐՈՒՄ» ՓԲԸ-ի փոխարեն ստեղծել ՀՈԱԿ, որից հետո նախատեսվում է լուծարել «ՁԵՎԱՎՈՐՈՒՄ» ՓԲԸ կազմակերպությունը:

Հիմնավորման մեջ նշվում է, որ ՀՈԱԿ-ի ստեղծումը հնարավորություն կընձեռնի Երեւան քաղաքում հանրային միջոցառումների, տոնակատարությունների, օտարերկրյա նախագահների եւ պատվիրակությունների այցելության եւ այլ միջոցառումների կապակցությամբ դրոշակազարդման ծառայությունների, քաղաքային գույքի ձեռք բերման, սպասարկման, ապամոնտաժման եւ արտաքին ձեւավորման այլ գործառույթների պատշաճ աշխատանքների իրականացում:

Բացի այդ, նաեւ փողոցներ անվանակոչելու մասին հարցեր են ընդգրկված օրակարգում: Օրինակ՝ առաջարկվում է փողոցներ անվանակոչել Վարդուհի Վարդերեսյանի, Էլվինա Մակարյանի, Մետաքսյա Սիմոնյանի անուններով:

## ԱԼԵՆ ՍԻՄՈՆՅԱՆԸ ՆՈՐ ԽՈՐՀՐԴԱԿԱՆ ՈՒՆԻ

ԱԺ նախագահ Ալեն Սիմոնյանը նոր խորհրդական ունի: ArmLur.am-ը տեղեկացավ, որ, ԱԺ նախագահի որոշմամբ, ԱԺ նախագահի օգնական Աշխեն Հայրապետյանն ազատվել է պաշտոնից: ԱԺ նախագահի մեկ այլ որոշմամբ՝ նա նշանակվել է Ազգային ժողովի նախագահի խորհրդական:

## ՀԱՆԴԻՊԵԼ Է

Վարչապետ Նիկոլ Փաշինյանն Իսլանդիայի մայրաքաղաք Ռեյկյավիկում ընթացող Եվրոպայի խորհրդի 4-րդ գագաթնաժողովի շրջանակում հանդիպում է ունեցել Ռումինիայի նախագահ Կլաուս Յոհաննիսի հետ:

Զրուցակիցները քննարկել են Հարավային Կովկասի տարածաշրջանում տեղի ունեցող գործընթացներին վերաբերող հարցեր: Վարչապետն անդրադարձել է Լաչինի միջանցքի ապօրինի արգելափակման հետեւանքով Լեռնային Ղարաբաղում ստեղծված հումանիտար ճգնաժամին:

Մտքեր են փոխանակվել երկուստեք հետաքրքրություն ներկայացնող այլ հարցերի շուրջ:

## ՄՆՈՒՄ Է ԹՂԹԻ ՎՐԱ



Հավաքական անվտանգության պայմանագրի կազմակերպության (ՀԱՊԿ) դիտորդների առաքելության տեղակայման փաստաթուղթը ստորագրելով՝ Երեւանն ավելի կայուն իրավիճակ կունենար. այս մասին հայտարարել է ՌԴ արտաքին գործերի նախարար Սերգեյ Լավրովը «Ցարգրադ» հեռուստաալիքի հարցազրույցում, որը հրապարակվել է չորեքշաբթի դիվանագիտական գերատեսչության կայքում:

«2022թ. աշնանը Երեւանում ՀԱՊԿ գագաթաժողովում պատրաստվել էր փաստաթուղթ հայկական տարածքում, մեր հայ դաշնակիցների խնդրանքին համապատասխան, Հավաքական անվտանգության պայմանագրի կազմակերպության դիտորդների առաքելություն տեղակայելու մասին,- ասել է Լավրովը: - Եթե Երեւանը հաստատեր այն, ինչն արդեն համաձայնեցված էր եւ պատրաստ ստորագրման եւ ուժի մեջ մտնելու համար, համոզված եմ, որ Հայաստանը կշահեր եւ կունենար ավելի կայուն իրավիճակ»:

ՌԴ արտաքին գործերի նախարարն ընդգծել է, որ փաստաթուղթը լիովին համաձայնեցված էր արտաքին գործերի նախարարների մակարդակով: «Հետո՝ վերջին պահին, հենց գագաթաժողովում հայ բարեկամները խնդրեցին հետաձգել դրա ընդունումը: Մինչեւ հիմա այն մնում է թղթի վրա եւ չի կարող իրականացվել»,- ավելացրել է նախարարը:

## ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏ

Արցախի Հանրապետության նախագահ Արայիկ Հարությունյանը մայիսի 17-ին հրավիրել է Անվտանգության խորհրդի նիստ, որի ընթացքում քննարկվել են Արցախի շուրջ ռազմաքաղաքական վերջին զարգացումները եւ համարժեք միջոցների ձեռնարկման հարցը:

Զեկուցումներով հանդես են եկել պետական նախարար Գուրգեն Ներսիսյանը, ուժային կառույցների ղեկավարները:

Նախագահ Հարությունյանը մի շարք հանձնարարականներ է տվել համապատասխան կառույցների ղեկավարներին՝ ուղղված Արցախի Հանրապետության անվտանգության եւ բնակչության կենսագործունեության ապահովմանը:

ԲԱՆԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

# ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆ ՈՒՂԱՐԿԵԼԸ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅՈՒՆ Է

**«Հայաստանը ճանաչում է 86.600 ք/կմ տարածք ունեցող Ադրբեջանի ամբողջականությունը, Ադրբեջանն իր հերթին հայտարարել է, որ ճանաչում է 29,800 ք/կմ տարածքով ՀՀ ամբողջականությունը»,- մայիսի 17-ին՝ Ռեյկյավիկում ընթացող ԵԽ գագաթնաժողովում ելույթի ժամանակ, հայտարարել է Նիկոլ Փաշինյանը:**




«Երկար տարիներ ԼՂ հակամարտության առկայությունը արդարացում էր Հայաստանում ժողովրդավարության բացակայության համար: 2018-ին մեր թավշյա հեղափոխությունը պայմաններ ապահովեց ժողովրդավարական զարգացումների համար, բայց 2020-ի սեպտեմբերին Ադրբեջանը հարձակվեց ԼՂ-ի վրա, եւ Հայաստանը ստիպված էր ներգրավվել պատերազմի մեջ:

2020թ.-ի նոյեմբերի 9-ին ես ստորագրեցի եռակողմ հայտարարությունը, որը պատճառ դարձավ Հայաստանում պետական ինստիտուտների վրա հարձակումների համար, բայց մենք ունակ եղանք պահպանել ժողովրդավարական կարգը»,-նշեց Փաշինյանը:

Նա հավելեց, որ 2021թ.-ի ԱԺ արտահերթ ընտրություններից առաջ՝ մայիսի 12-ին, Ադրբեջանը ներխուժեց Հայաստանի տարածք: Փաշինյանը նկատեց, որ 2021 թվականի արտահերթ ընտրություններում իրենք առաջ մղեցին խաղաղության օրակարգը եւ հաջողության հասան, բայց այդ խաղաղության օրակարգը եւս հարձակման ենթարկվեց. Ադրբեջանը 2021-ի նոյեմբերին եւ 2022-ի սեպտեմբերին կրկին ներխուժեղ Հայաստանի տարածք:

Փաշինյանի խոսքով՝ 2022-ի հոկտեմբերի 6-ին Պրահայում Հայաստանի եւ Ադրբեջանի ղեկավարների միջեւ համաձայնություն է կայացել, ըստ որի՝ կողմերը կարգավորում են իրենց հարաբերությունները՝ հիմք ընդունելով 1991-ի Ալմա-Աթայի հռչակագիրը, որով Խորհրդային Հայաստանի եւ Խորհրդային Ադրբեջանի վարչական սահմանները դառնում են պետական սահմաններ:

Նա հավելեց, որ երեք օր առաջ Բրյուսելում ավելի են առաջ գնացել, եւ նշվել է, որ Հայաստանը ճանաչում է 86.600 ք/կմ տարածք ունեցող Ադրբեջանի ամբողջականությունը, Ադրբեջանն իր հերթին ճանաչում է 29,800 ք/կմ տարածքով ՀՀ ամբողջականությունը:

ՀՀ վարչապետը հիշեցրեց, որ Լաչինի միջանցքի ապօրինի շրջափակման հետեւանքով ԼՂ-ի հայերը 5 ամիս կտրված են աշխարհից, եւ այնտեղ հումանիտար ճգնաժամ է հասունացել, եւ ԼՂ եւ Լաչինի միջանցք միջազգային առաքելություն ուղարկելը խիստ անհրաժեշտություն է:

Նա ընդգծեց, որ անհրաժեշտ է՝ Բաքվի եւ Ստեփանակերտի միջեւ միջազգային մեխանիզմների ներքո բանակցություններ սկսվեն՝ նպատակ ունենալով ապահովել ԼՂ հայերի անվտանգությունը եւ մարդու իրավունքները:

Ըստ ՀՀ վարչապետի՝ Եվրոպայի խորհուրդը, օգնելով հասցեագրել այս հարցերը, կնպաստի Հարավային Կովկասում կայունությանն ու ժողովրդավարությանը:

ԼՈՒՐԵՐ

## ՀԵՐԹԱԿԱՆ ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ՝ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Հունիսի 19-23-ը Հայաստան կժամանի Եվրոպական խորհրդարանի նիդերլանդացի պատգամավոր Բերտ-Յան Ռուսենի գլխավորած պատվիրակությունը:

ArmLur.am-ը տեղեկացավ, որ Հայաստան ժամանող պատվիրակությանը կդիմավորի ԱԺ եվրոպական ինտեգրման հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ Արման Եղոյանը:

Պատվիրակության ընդունելությունը կկազմակերպվի ՀՀ պետբյուջեի միջոցների հաշվին:



## ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Մայիսի 16-ին ՀՀ ներքին գործերի նախարար Վահե Ղազարյանն ընդունել է ԱՄՆ պետքարտուղարի փոխտեղակալ Ջեյմս Էփլգեյթի գլխավորած պատվիրակությանը:

Հանդիպմանը ներկա էին նաեւ ՀՀ-ում ԱՄՆ փոխդեսպան Չիփ Լեյթինենը եւ ՀՀ-ում ԱՄՆ դեսպանության Թմրամիջոցների դեմ պայքարի եւ իրավապահ համագործակցության ծրագրի ղեկավար Ալեքսիս Հաֆտվանին:

ԱՄՆ պետքարտուղարի փոխտեղակալը կարեւորել է պարեկների վերապատրաստումներն ու քաղիասարակության հետ փոխգործակցությունը:

Հանդիպմանը քննարկվել են նաեւ պարեկային ծառայության՝ վերջին չորս մարզերի ընդունելության, ստորաբաժանումում կանանց ներգրավվածության խթանման, օգտագործվող տեխնիկայի, սպառազինության, ոստիկանների ատեստացիային եւ վերապատրաստումներին վերաբերող այլ հարցեր:

## ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ

Թուրքիայի նախագահ Ռեջեփ Թայիփ Էրդողանը խորհրդարանի ժամանակավոր նախագահ է նշանակել Դեւլեթ Բահչելիին: Թուրքական Milliyet-ի փոխանցմամբ՝ Թուրքիայի նախագահ Ռեջեփ Թայիփ Էրդողանը հայտնել է, որ խորհրդարանում ամենաավագ պատգամավորը «Ազգայնական շարժում» կուսակցության առաջնորդ Դեւլեթ Բահչելին է, ուստի խորհրդարանի ժամանակավոր նախագահի պարտականությունները կկատարի նա:

ԽՈՇՈՐ ԳՈՒՄԱՐ

# ԽԱՐԴԱԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՀԱՆՑԱՎՈՐ ՍԽԵՄԱ

**ՀՀ քննչական կոմիտեի ԵՔՔՎ Կենտրոն եւ Նորք-Մարաշ վարչական շրջանների քննչական առաջին բաժնում կատարված քննությամբ բացահայտվել է օտարերկրյա քաղաքացիների կողմից իրենց համերկրացիներից կամ ՀՀ քաղաքացիներից համապատասխան երկիր փոխանցում կատարելու պատրվակով առանձնապես խոշոր չափերով խարդախություններ կատարելու հանցավոր մեխանիզմ:**



Մասնավորապես, քրեական վարույթի շրջանակներում պարզվել է, որ կիրառվող պատժամիջոցների պայմաններում կոնկրետ երկիր դոլարային արտարժույթով փոխանցում կատարելու դժվարություններ ունենալու պայմաններում անձինք, այդ թվում նաեւ՝ Հայաստանում գտնվող տվյալ երկրի քաղաքացիները, տեղեկանում են, որ Երեւան քաղաքում գործում է տվյալ երկրի գումարների փոխանցումով զբաղվող գրասենյակ: Դիմելով վերջինիս տնօրեն ներկայացող, տվյալ երկրի քաղաքացի հանդիսացող անձին՝ վստահում են նրան իրենց պատկանող տարբեր չափերով գումարները տվյալ երկրում գտնվող, իրենց կողմից նշվող անձանց հաշվեհամարներին փոխանցելու նպատակով: Որպես գրասենյակի ներկայացուցիչ ներկայացող անձինք առաջին անգամ պատշաճ կերպով կատարում են փոխանցումը, որից հետո, վստահելով վերջինիս, նույն անձինք երկրորդ անգամ են փոխանցումն իրականացնելու նպատակով խոշոր չափերով գումար տրամադրում նրանց: Օգտագործելով վերջիններիս մոտ ձեռք բերած վստահությունը՝ ստացած գումարները չեն փոխանցում համապատասխան հաշվեհամարներին, խաբեությամբ տիրանում են տուժողների գումարներին՝վերջիններիս պատճառելով առանձնապես խոշոր չափերի գույքային վնաս:

Մասնավորապես, քննությամբ պարզվել է, որ Արմավիր քաղաքի բնակիչը 2021թ. հոկտեմբերին գրասենյակի տնօրենի կողմից 20.000 ԱՄՆ դոլարը այլ երկրում գտնվող իր հարազատին փոխանցելուց եւ նրա նկատմամբ վստահություն ձեռք բերելուց հետո օրեր անց եւս 50.000 ԱՄՆ դոլար գումար է տվել նրան նույն եղանակով փոխանցում կատարելու համար: Որոշ ժամանակ անձը գրասենյակի «ՎոթսԱփ» համարից ստացել է բանկային փոխանցման 2 կտրոնի նկար, ըստ որոնց, իբր, նրա անվամբ փոխանցվել է 28.000 ԱՄՆ դոլար, սակայն բանկում նրան հայտնել են, որ ներկայացրած կտրոններով փոխանցում չի կատարվել: Պարզաբանումներ ստանալու համար դիմել է գրասենյակի տնօրեն ներկայացած անձին, որը տեղեկացրել է, որ աշխատողը, վերցնելով գումարները, փախել է:

Մեկ այլ դեպքում 2022թ. մայիսին օտարերկրացի անձը, նախապես ծանոթանալով ՀՀ-ից գումարների փոխանցմամբ զբաղվող վերոնշյալ անձի հետ, 2022թ. ապրիլին նրանց է տրամադրել 3000 ԱՄՆ դոլար, որը նույն օրը փոխանցվել է իրենց կողմից նշված հաշվեհամարին:

Վստահություն ձեռք բերելով այդ անձի նկատմամբ՝ օտարերկրացի քաղաքացին նրան է վստահել եւս 42.600 ԱՄՆ դոլար գումարի փոխանցումը, սակայն վերջինս, նախնական համաձայնությամբ, խմբի կազմում, օգտագործելով վստահությունը, խարդախությամբ ուրիշի գույքը հափշտակելու նախնական դիտավորությամբ վերցված նշված գումարը չի փոխանցել եւ խաբեությամբ տիրացել է դրան:

Քննությամբ ձեռք բերված փաստերի հիման վրա՝ որպես գրասենյակի տնօրեն հանդես եկած անձին մեղադրանք է ներկայացվել՝ՀՀ նախկին քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով, որը համապատասխանում է գործող ՀՀ քրեական օրենսգրքի 255-րդ հոդվածի 3-րդ մասի 3-րդ կետին (2 դրվագ): Որպես խափանման միջոց՝ նրա նկատմամբ կիրառվել է կալանքը:

Վերջինիս վերաբերյալ մասն առանձնացվել է առանձին վարույթում, այդ մասով հայտարարվել է նախաքննության ավարտ, եւ քրեական վարույթի նյութերն ուղարկվել են հսկող դատախազին՝ մեղադրական եզրակացությունը հաստատելու եւ վարույթը դատարան ուղարկելու միջնորդությամբ:

Որպես գրասենյակի աշխատակից հանդես եկած անձի նկատմամբ հարուցվել է քրեական հետապնդում՝ ՀՀ քրեական օրենսգրքի նույն հոդվածով, նրա նկատմամբ որպես խափանման միջոց է կիրառվել բացակայելու արգելքը եւ հայտարարվել հետախուզում:

Հաշվի առնելով, որ ՀՀ-ում գտնվում են տվյալ երկրի քաղաքացի հանդիսացող բազմաթիվ անձինք, ինչպես նաեւ ՀՀ քաղաքացիների կողմից տվյալ երկրի քաղաքացիների հետ ունեցած գործարար կապերը՝ՀՀ քննչական կոմիտեն հորդորում է ձեռնպահ մնալ զարտուղի ճանապարհով եւ մեխանիզմներով, անվստահելի անձանց միջոցով նման գործարքներ իրականացնելու փորձերից եւ այդկերպ խարդախության զոհ դառնալու հեռանկարից:

ԼՈՒՐԵՐ

## ԱՊՕՐԻՆԻ ՀՈՐԱՏՄԱՆ ԴԵՊՔ

ԲԸՏՄ տեսուչները վերահսկողական կանխարգելիչ հերթական շրջայցի ընթացքում Արմավիրի մարզում հայտնաբերել են խորքային հորի ապօրինի հորատման դեպք:

Քաղաքացին ոռոգման նպատակով ջրօգտագործում կատարելու համար Նորապատ գյուղի վարչական տարածքում, առանց համապատասխան փաստաթղթերի առկայության, իրականացրել է խորքային հորի ապօրինի հորատում:

Բնապահպանության եւ ընդերքի տեսչական մարմնի կողմից անհապաղ դադարեցվել են ապօրինի հորատման աշխատանքները:

Իրավախախտը կենթարկվի պատասխանատվության:

## ՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՓՈՐՁ

ArmLur.am-ին հայտնի դարձավ, որ Սուրեն Գրիգորյանին մեղադրանք է առաջադրվել, որ նա, զբաղեցնելով ՀՀ ոստիկանության Կոտայքի մարզային վարչության Նաիրիի բաժնի քրեական հետախուզության բաժանմունքի օպերլիազորի պաշտոնը, իրեն ամրակցված հաշվեցուցակային զենքի՝ «Մակարով» տեսակի ատրճանակի գործադրմամբ 2021 թվականի հոկտեմբերի 16-ին՝ժամը 23:55-ի սահմաններում, Երեւան քաղաքի Դավթաշեն թաղամասի Տիգրան Պետրոսյան 11/1 հասցեում այլ անձանց կյանքի համար վտանգավոր եղանակով փորձել է ապօրինաբար կյանքից զրկել Ալեքսան Նավասարդյանին, սակայն իր կամքից անկախ հանգամանքներով հանցանքն ավարտին չի հասցրել, քանի որ վերջինս կարողացել է թաքնվել եւ խույս տալ կրակոցներից:

## ԲԱՑԱՀԱՅՏՈՒՄՆԵՐ

Իրավապահները շարունակում են բացահայտել պետական դավաճանության դեպքերը: Մեզ հայտնի դարձավ, որ Միքայել Գրիգորյանին մեղադրանք է առաջադրվել, որ նա, հանդիսանալով Հայաստանի Հանրապետության քաղաքացի, լրտեսության, օտարերկրյա պետությանը պետական գաղտնիք հանձնելու եւ թշնամական գործունեություն իրականացնելու համար այլ օգնություն ցույց տալու, այն է՝ օտարերկրյա հետախուզության ներկայացուցիչների առաջադրանքով Հայաստանի Հանրապետության տարածքային անձեռնմխելիությանը եւ արտաքին անվտանգությանն ի վնաս օգտագործելու համար պետական եւ ծառայողական գաղտնիք հանդիսացող, ինչպես նաեւ ռազմական բնագավառի այլ տեղեկություններ հավաքելու եւ հանձնելու եղանակով կատարել է պետական դավաճանություն, ինչպես նաեւ ապօրինի կերպով ձեռք է բերել, փոխադրել ու պահել ռազմամթերք: Վերջինս կալանավորված է:

*Ք. ՄԱՆՈՒԿՅԱՆ*

ԼՈՒՐԵՐ

## ՏՂԱՄԱՐԴՈՒ ԴԻ ԵՆ ՀԱՅՏՆԱԲԵՐԵԼ

Մայիսի 16-ին՝ ժամը 14:20-ին, Արցախի Հանրապետության ՆԳՆ ոստիկանության հերթապահ մասում հաղորդում է ստացվել, որ Վ. Սարգսյան փողոցի թիվ 8/1 հասցեում հայտնաբերվել է տղամարդու դիակ: Այս մասին տեղեկանում ենք Արցախի ՆԳՆ ոստիկանությունից:

Անմիջապես դեպքի վայր են մեկնել ոստիկանության Ստեփանակերտ քաղաքի վարչության պետը, հետաքննիչները եւ ՆԳՆ ԱԻ պետական ծառայության արագ արձագանքման հատուկ ստորաբաժանման հերթապահ օպերատիվ խումբը:

Ոստիկանության հետաքննիչները պարզել են, որ նշված հասցեում հայտնաբերված դիակը հանդիսանում է Աշոտ Բաբայանը (ծնված 1962թ.):

ՆԳՆ ծառայողները վերջինիս տեղափոխել են «Դատաբժշկական փորձաքննության բյուրո» ՊՈԱԿ: Զննությամբ դիակի վրա արտաքին բռնության հետքեր չեն հայտնաբերվել:

Նշանակվել է դատաբժշկական փորձաքննություն:

Ստուգմամբ զբաղվում է ոստիկանության Ստեփանակերտ քաղաքի վարչությունը:

## ՓԱՍՏԱԹՂԹԵՐ ԵՆ ԿԵՂԾՎԵԼ

Համայնքապետարանի գանձապահը կեղծել է փաստաթղթերը ու հափշտակել գումարներ: ArmLur.am-ին հայտնի դարձավ, որ Սարգիս Սարգսյանին մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ նա, հանդիսանալով համայնքապետարանի գանձապահ, այնուհետեւ համայնքային կառավարչական հիմնարկի օպերատոր, միսնական դիտավորությամբ կեղծել է իրավունք վերապահող պաշտոնական փաստաթղթեր, ապա դրանք օգտագործելով՝ հափշտակել է վճարելու եղանակով իրեն վստահված խոշոր չափերով գումարներ, բացի այդ, ձեռք է բերել ռազմամթերք եւ ապօրինի կերպով պահել իր բնակության վայրում:

*ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ*

## ԶԵՆՔԻ ԱՊՕՐԻՆԻ ՎԱՃԱՌԱԿԵՏ

Հայաստանի առեւտրի կենտրոններից մեկում հայտնաբերվել է զենք-զինամթերքի ապօրինի վաճառքի կետ:

Ոստիկանությունից հայտնում են, որ Կոտայքի մարզի ոստիկանությունն օպերատիվ տեղեկություններ է ստացել, որ առեւտրի կենտրոններից մեկում 49-ամյա տղամարդը զենք- զինամթերքի ապօրինի շրջանառությամբ է զբաղվում: Իրավապահները տվյալները ստուգել են ու պարզել, որ տղամարդն իսկապես առանց համապատասխան թույլտվության վաճառում է ատրճանակներ, հրազեններ ու փամփուշտներ: Խանութի սեփականատերը, որն Աբովյան քաղաքի 49-ամյա բնակիչ է, եւ 40-ամյա աշխատակիցը ձերբակալվել են: Հանգամանքները քննությամբ պարզվում են:

● *Ըստ ոստիկանության տվյալների՝ մայիսի 16-ից 17-ը Հայաստանի Հանրապետությունում բացահայտվել է հանցագործության 66 դեպք, որոնցից 4-ը՝ նախկինում կատարված:*

ՄԱՐԶ

## ՍԱՀՄԱՆԱԳԾՈՏՈՒՄ ՉՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՀՈՂԵՐ

Տավուշի մարզպետարանից տեղեկացել եմ, որ Տավուշի մարզի սահմանամերձ, չօգտագործվող հողերը կազմում են 11 412 հեկտար, որից վարելահող՝ 7210.7 հեկտար, խոտհարք՝462 հեկտար, արոտավայր՝ 2852.4 հեկտար, այլ՝ 831.9 հեկտար, տնամերձ՝ 55 հեկտար: Սահմանամերձ, չօգտագործվող հողերի մի զգալի մասը մոտ երեք տասնամյակ գտնվում է Ադրբեջանի զինուժի վերահսկողության տակ, մի մասը ականապատ է, այլ մասը գտնվում է Ադրբեջանի զինուժի ուղիղ նշանառության տակ: Տավուշի մարզպետարանից պատասխանել են, որ Տավուշի մարզի Իջեւան, Բերդ, Նոյեմբերյան համայնքների սահմանամերձ 23 բնակավայրերի սեփականաշնորհված հողատարածքների սեփականատերերն օգտվում են «Հողի հարկի արտոնությունների մասին» ՀՀ օրենքով սահմանված արտոնությունից: Ականապատված եւ չօգտագործվող հողատարածքների հողի հարկն ամբողջությամբ փոխհատուցվում է ՀՀ պետական բյուջեի միջոցների հաշվին՝ համապատասխան համայնքին լրացուցիչ դոտացիա հատկացնելով: Ըստ համայնքների փոխհատուցումը կատարվում է հետեւյալ կերպ. Իջեւան համայնքին տարեկան հատկացվում է 13 միլիոն 682 հազար 200 դրամ (Այգեհովիտ, Բերքաբեր, Ներքին Ծաղկավան, Կիրանց, Սարիգյուղ, Սեւքար, Վազաշեն սահմանամերձ բնակավայրեր): Բերդ համայնքին հատկացվում է 15 միլիոն 231 հազար 900 դրամ (Այգեձոր, Արծվաբերդ, Մովսես, Ներքին Կարմիրաղբյուր, Չինարի, Չորաթան, Պառավաքար սահմանամերձ բնակավայրեր): Նոյեմբերյան համայնքին հատկացվում է 15 միլիոն 65 հազար 100 դրամ (Նոյեմբերյան, Բաղանիս, Բարեկամավան, Բերդավան, Դովեղ, Կոթի, Ոսկեվան, Կողբ, Ոսկեվան, Կողբ, Ոսկեպար սահմանամերձ բնակավայրեր): Տավուշի մարզի սահմանագոտում գտնվող, Ադրբեջանի զինուժի վերահսկողության տակ գտնվող կամ սահմանամերձ, վտանգավոր գոտում լինելու պատճառով չմշակվող 11 հազար 412 հեկտար հողերի պարագայում մարզի 4 խոշոր համայնքները որպես պետական բյուջեից փոխհատուցում են ստանում տարեկան ընդհանուր 43 միլիոն 979 հազար 200 դրամի չափով, ինչն անբավարար է:

## 50-ԻՑ ՊԱԿԱՍ ԱՇԱԿԵՐՏՆԵՐ

Տավուշի մարզի սահմանամերձ, փոքր գյուղերից արտագաղթի, նաեւ Հայաստանի այլ բնակավայրեր վերաբնակման հետեւանքով բազմաթիվ դպրոցներ քիչ թվով աշակերտներ ունեն: Տավուշի մարզպետարանից հայտնել են, որ մարզի հանրակրթական 76 դպրոցներից 11-ն ունեն 50-ից քիչ թվով աշակերտ: Դրանք են Աղավնավանքի (38 աշակերտ), Լուսաձորի (37 աշակերտ), Լուսահովտի (29 աշակերտ), Աճարկուտի (13 աշակերտ), Դիտավանի (36 աշակերտ), Կիրանցի (41 աշակերտ), Ակնաղբյուրի (31 աշակերտ) Գոշի (39 աշակերտ), Իծաքարի (27 աշակերտ), Չինչինի (46 աշակերտ), Բարեկամավանի (14 աշակերտ) դպրոցները:

*ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ*
*Տավուշ*

ՀԱՅԱՍՏԱՆԸ ԿՈՂՄ Է

# ՔԵՐՈԲՅԱՆԸ՝ ՆԱԽԻՋԵՎԱՆԻ ԵՐԿԱԹԳԾԻ ԲԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

**ՀՀ էկոնոմիկայի նախարար Վահան Քերոբյանի խոսքով՝ Հայաստանը կողմ է ցանկացած ենթակառուցվածքի զարգացմանը:**



Այս մասին նա երեկ ասաց Ազգային ժողովում լրագրողների հետ ճեպազրույցի ժամանակ՝ պատասխանելով հարցին՝ որ կազմակերպություններն են իրականացնելու մաքսային ծառայության վերահսկողություն Նախիջեւանով երկաթուղային գծի բացման դեպքում, որի մասին խոսել էր Շառլ Միշելը՝ ասելով՝ երկաթգծի բացման դեպքում դիմելու են միջազգային մաքսային կազմակերպություններին:

«Աշխարհում կան շատ հայտնի կազմակերպություններ. դրանցից մեկը նախատեսված էր Վրաստանի եւ Աբխազիայի դեպքում կարգավորումներ իրականացնելու համար, շվեյցարիական ընկերություն էր, բայց կան նաեւ ֆրանսիական եւ մի շարք այլ ընկերություններ, որոնց տրված փաստաթղթերը մեծ վստահություն են վայելում ամբողջ աշխարհում: Այդ ընկերություններից պետք է լինի: Աբխազիայի դեպքում սխեման հետեւյալն էր. ելքի ու մուտքի հատվածում պետք է ընկերության զննման կետեր դրվեին, որոնք կփոխարինեն մաքսատան ֆունկցիային, եւ իրենք կատարեին ամբողջ ընթացքը, բայց դա չաշխատեց, ու մենք հիմա չենք կարողանում երկաթուղային բեռնափոխադրումներ իրականացնել Աբխազիայի տարածքով»,- ասաց Քերոբյանը:

Նրա խոսքով՝ ենթակառուցվածքների զարգացումը Հայաստանի համար կարեւոր է, քանի որ 30 տարի թե՛ ֆիզիկական առումով, այսինքն՝ դպրոցներ, ճանապարհներ, թե՛ ոչ ֆիզիկական՝գիտություն, կրթություն, մշակույթ, որեւէ ներդրումներ չի արվել:

«Մենք բավական մեծ պոտենցիալ ունենք այս մասով եւ չնայած մասշտաբային ներդրումներ ենք անում ենթակառուցվածքների մեջ, բայց նախորդ 30 տարում դրանք չեն եղել: Հիմա խոշոր ներդրումների կարիք ունենք, շտապում ենք բոլոր ուղղություններով ներդրումներ անել եւ անում ենք»,- ընդգծեց նախարարը:

Հարցին՝ եթե Աբխազիայի օրինակը չի աշխատել, դա կգործի արդյոք Հայաստանի դեպքում, նա նշեց. «Եթե հույս չլիներ, որ կաշխատի, այդ մասով բանակցություններ չէին իրականացվի»:

